

էր որ Թեմական Գործադիր Մարմնի կողմէ ներկայացուեցաւ ուսմէն կրթական նախարարութեան վաւերացման, ինչ որ տեղի ունեցաւ 1923 Մայիս 21-ին նոյն նախարարութեան 38, - 698 թիւ պաշտօնագրով: Ռուսմանհայ տարրական դպրոցներու սոյն ուսումնական ծրագրին նիւթերուն մեծ մասը (իրազննութիւն, ուսմէն լեզու, Ֆրանսերէն, աշխարհագրութիւն, Ռուսմանիոյ աշխարհագրութիւն, ընդհանրապատմութիւն, Ռուսմանիոյ պատմութիւն, բրնական պատմութիւն, թուարանութիւն, երկրաչափութիւն, քաղաքացիական ուսմունք, նկարչութիւն, երգ եւ ձայնագրութիւն, ձեռագործ եւ ձեռարուեստ, մարմնամարզ) բառ առ բառ ընդօրինակուած են ուսմէն պետական վարժարաններու ծրագրէն, իսկ կրօնը, հայ լեզուն, Հայոց պատմութիւնը եւ Հայաստանի աշխարհագրութիւն պատրաստուած են համագումարին կողմէ՝ հիմ ունենալով կովկասահայ դպրոցներու կրթական ծրագիրը: Թեմական Գործադիր Մարմինը սոյն ծրագիրը անմիջապէս կիրարկութեան դրաւ ուսումնահայ դպրոցներուն մէջ, եւ մինչեւ այսօր ալ անոր համաձայն կ'ընթանան մեր վարժարանները:

* * *

Անցեր են արդէն 7 տարիներ այդ օրերէն: Եւ եթէ ակնարկ մը նետենք մեր օրերու կրթական վիճակին վրայ շատ սփոփիչ չենք դտներ պատկերը, թէեւ այդ եօթը տարիներուն մէջ վասնուեցան շատ ճիգեր: Արդարեւ Պուրբէշ, Կալաց եւ Սիլիսթրէ այդ շրջանին է որ ունեցան իրենց դպրոցական նոր շէնքերը, ու Պաղարձը իր մանկապարտէզը: Այդ շրջանին է դարձեալ որ պատրաստուած ուսուցիչներու ցանց մը գործի անցաւ այս գաղութին մէջ՝ մինչդեռ առաջ պատուելիներու եւ սովորական վարժապետներու ձեռքն էր ապրած կրթական գործը դրեթէ ամբողջ դար մը:

Բայց ասոնք մեր կրթական շարժման խարուսիկ երեսն են միայն, որովհետեւ եթէ չէնք ու գործաւորը ունինք՝ աստղձը կը պակսի մեզի, ու պիտի պակսի երթալով:

Առնենք Պուրբէշը: Ծէնք, եօթը դասարան՝ մանկապարտէզէն դատ, ուսուցչական ընտիր կազմ մը: Ու մէկ ու կէս միլիոնի պիւտձէ մը: Բայց այս բոլորը 260-270 աշակերտի

համար միայն: Համայնքի մը մէջ ուր հազարէն չա՛տ աւելի է հայ մնացած հայ ընտանիքներուն թիւը: Ի՞նչ կ'ըլլան միւս տղաքը: Կը մեծնան փողոցն ու օտարին դիրկը:

Քօսթանցան ահա: Զօրաւոր չէ հոն օտար մրցումը, բայց աշակերտութեան թիւը երկու հարիւրը չանցնիր: Ու ի՞նչ նիւթական զոհողութիւն գաղութին համար՝ իր հինգ դասարանը պահելը. որովհետեւ Քօսթանցան հասութարեք կալուած չունի, ինչպէս ուրիշ քաղաքներ. այժմու մարդիկը դեռ տաք հայ են, ու կրնան այդ զոհողութիւնը ընել տարուէ տարի. Քօսթանցայի դպրոցը անօթի պիտի մեռնի վաղը՝ եթէ սրտերը քիչ մը պաղին:

Կալա՛ցը ահա ձեզի: Ի՞նչ յոյսերով չինեց իր նոր դպրոցը, ու ի՞նչ ոգևորութեամբ բացաւ իր չորս դասարանը: Բայց հայը Կալացէն կը պարպուի տակաւ, ու ամէն օր կը քիչնայ տոց թիւը դպրոցին մէջ: Հապա վա՞ղը...:

Սիլիսթրէն չէնք ու ուսուցիչ ունի, բայց դպրոցը կէս մը միայն հայ է: Պետութիւնն է որ կը հողայ նոյնիսկ հայ ուսուցչին թոշակը, որովհետեւ դպրոցը իբր կը նկատէ...:

Կերպով մը կը քաջըլուի նաեւ Պաղարձըրի դպրոցը:

Քիչնէվ չկարծէք թէ դպրոց ունինք: Հայ ուսուցիչ մը կը կարդացնէ քանի մը տղաք: Քիչնէվի հայ գիմնադիտն ըստածը արդէն չորս-հինգ տարի է չկայ. ու եղած ատենն ալ ուրս դպրոց մըն էր ան՝ հրէայ աշակերտներով:

Փօքչանի մէջ տէրտէրը երբեմն հայ մանուկներու կը ցուցնէ հայ դիրերը:

Կեոլան անունով միայն հայ դպրոց ունի: Ծէնքերը, այո՛, բայց թէ ինչքա՞ն հայ է դպրոցը, այդ չփորձուիք հարցնել...:

Ճուրճովայի պզտիկ դպրոցը տարի մը իսկ չտուեց: Տեղացիները չկրցան 60,000 լէյ ճարել տարին, որպէսզի դարձեալ փողոցը չմնան փողոցներէն ժողվուած երեսուն մը երեխաները...:

Պրայլա ո՛չ իսկ մանկապարտէզ մը ունի: Սուշովա դպրոցի հե՛տքն իսկ չկայ ա՛լ: Ռոմանի դպրոցին փառաւոր չէնք վարձու տուած են նահանգապետութեան:

Պօթօչանի մէջ հայ դպրոցը տէրտէրի ու